ՀՀ ԿԳՄՍՆ «Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ

ԱՀ Կրթության, Գիտության, Մշակույթի Եվ Սպորտի Նախարարություն

ՀՀ ԿԳՄՍՆ «Ընտանիք» ՄՊՍ կենտրոն ՊՈԱԿ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ԵՌԱԿՈՂՄ ՀՈՒՇԱԳԻՐ

ՀՀ ԿԳՄՍՆ «Ընտանիք» մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն ՊՈԱԿ-ի, ՀՀ ԿԳՄՍՆ «Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի» ՊՈԱԿ-Ի և ԱՀ ԿԳՄՍ նախարարության միջև

20 Հունիսի 2022թ.

ՀՀ ԿԳՄՍՆ «Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ Ուսումնարան), ի դեմս տնօրեն Քնարիկ Ահարոնյանի, մի կողմից, մյուս կողմից ՀՀ ԿԳՄՍՆ «Ընտանիք» մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ Կենտրոն), ի դեմս տնօրեն Արթուր Մինասյանի և Արցախի Հանրապետության ԿԳՄՍ նախարարությունը, ի դեմս նախարար Անահիտ Հակոբյանի, (այսուհետ՝ Կողմեր), կարևորելով կրթամշակութային համագործակցության դերը դեռահասների դաստիարակման գործընթացում, կնքելով սույն փաստաթուղթը (այսուհետ՝ Հուշագիր), հաստատում են իրենց մտադրությունը ներքոնշյալ հարցերում:

1. Համագործակցության առարկա

Սույն Հուշագիրը կարգավորում է Կողմերի համագործակցությունը՝ կազմակերպելու կրթամշակութային բազմազան ծրագրեր՝ ի շահ դեռահասների համակողմանի ու ներդաշնակ զարգացման և կրթամշակութային կամուրջների ստեղծման՝ արժևորելով փորձի փոխանակումն ու միասնական գործելակերպը:

2. Համագործակցության նպատակները

2.1. Կողմերը.

- Նպաստում են դեռահասների կրթությանն ու դաստիարակությանը, մասնագիտական կողմնորոշմանն ու ձեռք բերմանը, ազգային և համամարդկային արժեքներով դաստիարակված անձի ձևավորմանը, ազգային արհեստի ու արվեստի տարածմանն ու պահպանմանը, կրթամշակութային ծրագրերի իրականացմանը, միջմշակութային փորձի փոխանակմանը, ազգային փոքրամասնությունների հետ կապերի ամրապնդմանը՝ սեմինարների և ուսուցողական, հետազոտական ծրագրերի, ուսումնասիրությունների, գեղարվեստական միջոցառումների, փոխադարձ այցերի, փառատոնների, մրցույթների, ճանաչողական էքսկուրսիաների, վարպետաց դասերի, բարեգործական ծրագրերի կազմակերպման միջոցով:
- Տրամադրում են անհրաժեշտ ռեսուրսներ և տեղեկատվություն՝ ելնելով Հուշագրի նպատակներից:
- Ամրապնդում են համագործակցությունը, նպաստում են կրթամշակութային կամուրջների ստեղծմանը ինչպես Հայաստանում և Արցախում, այնպես էլ դրա սահմաններից դուրս բնակվող դեռահասների համար:
- Վերահսկում են իրականացվող աշխատանքները համագործակցության շրջանակներում:

•

2.2. Կողմերը սույն Հուշագրի շրջանակներում.

- Նպաստում են կողմերի գործունեության լուսաբանմանը:
- Համատեղ մշակում են անհրաժեշտ ծրագրեր՝ հաշվի առնելով աշխատանքների առանձնահատկությունները, հեռանկարային զարգացումները:
- Իրականացնում են հայրենանվեր և ազգապահպան կրթամշակութային, հետազոտական ծրագեր:
- Աջակցում են աշխատակազմերի մասնագիտական կարողությունների զարգացմանը:
- Ապահովում են անհրաժեշտ պայմաններ մասնակիցների մասնագիտական պատրաստվածության բարձրացման նպատակով:
- Իրականացնում են մասնագիտական կողմնորոշման և աշկերտության դասեր դեռահասների համար:
- Կատարում են այլ գործողություններ սույն Հուշագրի շրջանակներում:

3. Այլ դրույթներ

3.1.Սույն Հուշագրով սահմանված Կողմերի վնասները համագործակցության պարտավորությունների ոչ պատշաճ կատարման և/կամ չկատարման դեպքում, ինչպես նաև ֆորս-մաժորային իրավիճակները և Հուշագրին հաջորդող պայմանագրի լուծարման կարգը ներկայացվում են Կողմերի միջև կնքվող պայմանագրի(երի) շրջանակներում:

3.2. Սույն Հուշագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից:

Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի դադարեցնել սույն Հուշագիրը՝ մյուս Կողմին առնվազն 30 օր առաջ գրավոր ծանուցելով այդ մասին:

Սույն Հուշագրի ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է, եթե կատարված է գրավոր և ստորագրված է Կողմերի կողմից:

3.3. Հուշագիրը կազմված է հայերեն լեզվով, բաղկացած է երեք օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավական ուժ:

4. Կողմերի իրավաբանական հասցեները և վավերապայմանները

ՀՀ ԿԳՄՍՆ «Ընտանիք» մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն Հեռախոսահամար՝ (312) 6 64 07	ԱՀ Կրթության, Գիտության, Մշակույթի Եվ Սպորտի Նախարարություն	ՀՀ ԿԳՄՍՆ Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան Հեռախոսահամար՝ (312) 6 64 08
Տնօրեն՝ Նիլուֆար Մելքումյան ստորագրություն	Նախարար՝ Անահիտ Հակոբյան ստորագրություն	Տնօրեն՝ Քնարիկ Ահարոնյան ստորագրություն